

հետ մէկտեղ քանի մը ալ այսպիսի առաժնեք փնտռելին այն երկիրներուն մէջ ուր պակաս չեն. ասոնք ապրասամ մը կ'ըլլային հոգւոց վէրքերը բժշկելու համար. իսկ անոնք ուրիշ վէրքեր կը բանան: Քիչ օր առաջ, հաւատալ ինծի, երկու խոլոֆ միտքս ձգեցին կռուի մը մանրամասն պատմութեան հետ լի-գուրկոսի օրէնք մը:

Եթէ հանդիպիս վիճողներու, կ'ըսէր տարւոքը պզտրկին, կրնաս մէկին կողմը բռնել, բայց գոնէ ճշմարտութիւնը ըսէ:

Նոյն սե փիլիսոփան է որ քիչ մը առաջ իր միտք խրճրթին մէջ իր տղաքը սովորեցնելու ատեն՝ ամենայն իրաւամբ իր երկրին այս առածը կը յիշեցընէր անոնց. վասն զի ամենայն ինչ առատ էր իր շրջակայքը, և յայտնի կ'երևէր որ բնութեան չիզլացած բանն ալ ինքը աշխատանքով հայթայթելու չէր վախեր:

Եթէ մեղը կը սիրես՝ մի վախնար մեղուներէն:

Դարձեալ ըսաւ

Ով որ շղթաներու մէջ խածնէ կը փորձէ, ուտելու հասկ չունի:

Ծոյլին թշուառութեանը համառօտ նկարագիր մ'ալ կ'ընէր ցուցնելով միանգամայն անոր անպիտանութիւնը, հետեւեալով.

Ճնճուկը կորեակը կը սիրէ. բայց գետին չի բանիր:

Սակայն իմ թխամորթ իմաստնոյս ամենէն գեղեցիկ առածը այն է զոր ստէպ կը կրկնէր, և իր գէմքին վրայ անոյշ խաղաղութիւն մը կը նկարէր.

Այն ճշմարտութիւնը որ սրտէ կը բղխէ և մարդուն ճակտին վրայ կը կարգացուի՝ չիջնուիր:

Ձեզի Ամերիկացւոց առածներուն վրայ խօսեցայ. աւանդ, մեր խեղճ վայրենիները այնքան գէթախտ են որ և ոչ իրենց հարցը իմաստութիւնը պահելու կարողութիւն ունին. անգաղար կ'ողբան անոնցմէ ընդունած կեանքներնուն

վրայ. և սակայն դեռ իրենց մեծ անտառներուն մէջ՝ մտքերնին քանի մը գեղեցիկ խօսքեր կը բերեն. հրաշալի գաղափար մ'ունին՝ իրենց անապատները զարդարող Արարչին վրայ. ամենէն թշուառ մարդիկն ալ իրենց վսեմութիւնը կը գտնան՝ երբ իրենց միտքը մինչև առ Աստուած բարձրացնեն:

Բայց այս մտածութիւնքը իրենց այնչափ ծանր կ'երևան՝ որ առանց ըմբռման անոնց վրայ ընդունայնութեամբ վիճելը անվայելուչ կը համարին: Անոր համար ինչպէս սուրբ տապանակ մը այնպէս սրտերնուն մէջ կը պահեն, որ միայն համայնատես աչքը կրնայ տեսնալ: Անոնցմէ մէկը քիչ առաջ ինծի.

« Եղբայր, մեծ ոգին՝ ընտանեկան խօսակցութեան նիւթ ըլլալ չուզեր » ըսաւ ու լռեց. այս լռութիւնն է որ այնչափ ճամբորդներ մոլորեց. անաստուած ժողովուրդ բնաւ չկայ:

Նարա-Մունի բարի միայնակեցիին հետ այս խօսակցութիւնները ընելէն քանի մը օր ետքը, նաւը դարձաւ, և հովերը յաջող գտնելով՝ Հոռնի հրուանդանը արագաբար անցան, որուն ձիւնապատ գագաթը հիանալի կերպով կը վերջացնէր այն մեծատարած Ամերիկայն, որ քիչ ատենէն անհարթ բնութեան մէջէն քաղաքականութեան բոլոր հրաշալիքը պիտի յայտնէ:

Կը շարունակուի:

Ա.Լ.ԵՍՍՍԱՆՏՐԻՆԱ. ԹԻՆՆԷ

Հռչակաւոր ճանապարհորդ մը, որուն ուսումնական հետաքոտութեանց հետ անմոռաց պիտի մնայ նաև բռնական մահուան յիշատակը՝ գիտութեց արձանագրութիւններուն մէջ:

Սակաւակեաց եղև թիւննէ, սակայն այն քիչ տարիներուն մէջ՝ երեք անգամ ճանապարհորդեց Ափրիկէի խորերը. և այն ուղևորութեանց նպատակն էր նորանոր ծանօթութիւններով ճոխացը-

նել երկրաբանական ու աշխարհագրական ուսմունքները:

Հոլանտայի Լակէյ քաղաքը ծնած է Ալեսանտրինա 'ի 1839: Հայրը հարուստ Անգղիացի մըն էր, ուսկից մեծ հարստութիւն ժառանգեց. իսկ մայրը Հոլանտացի: Երկանը մեռնելէն ետքը՝ հետն առնելով Ալեսանտրինա դուստրը՝ որ հազիւ տասուերկու տարուան էր, ուղևորութիւն մը ըրաւ յեգիպտոս, ու Գահիրէի մօտ գեղեցիկ տուն մը վարձելով, շատ տարի կեցաւ հոն:

Արեւելից մէջ երկարատեւ բնակութիւն ու կենակցութիւնը, և իրենց տունն հանդիպող այլևայլ ուսումնական եւրոպացի ճանապարհորդաց ծանօթութիւնն, փափաք մը ազդեցին յօրիորդն թիննէ՝ ամբիկեան գաւառաց հետազօտութեանը: Որչափ ալ զարմանալի էր այսպիսի փափաք մը իր հասակին ու սեռին, այլ ոչ օտար մօրը փափաքէն ու մտածութիւններէն. որ ուղեւոր ընկերել անոր վտանգացը և քննութեանց, հրամայեց որ այն արշաւանաց համար հարկաւոր պատրաստութիւններն տեսնուին:

Ըստ մեծի մասին դեռ անծանօթ են՝ ճերմակ Նեղոսի մօտերը գտնուած երկիրներն. ուստի դէպ 'ի այն կողմերն սկսաւ արշաւել այս նորատեսիլ կարաւանը, որուն զլուխ և առաջնորդ էին երեք կանայք. թիննէ տիկինը, իր քոյրն ու դուստրը Ալեսանտրինա: Աղջկան գեղեցկութիւնը ու հասակը, զգեստուց ճոխութիւնը, ձեռք զարնուած գործին դժուարութիւնը՝ զարմանքի մէջ ձգեցին երկրին կիսամերկ բարբարոսները, որոնք երկար ատեն կարծեցին թէ երկնային զօրութիւն մը և կամ անոնց կողմանէ զրկուած անձ մըն է անիկայ, ու իրենց յափշտակութեանը մէջ բաւական չսեպելով զինքը յամենայնի մեծարել, երկրին իշխանութիւնն ալ փափաքեցան իրեն յանձնել:

Առջի արշաւանքին յաջող ելքը խրախուսեց քաջասիրտ կանայքը՝ ալ աւելի կարևորագունի մը ձեռք զարնելու. ուստի մոքերնին դրին Նեղոսի կողմնա-

կան՝ ու դեռ աղէկ մը քննութեան չառնուած Պահր-էլ-ղասալ գետը դիտելու ելլել, ու ետքը առաջ երթալ Նիամ-Նիամ սևամորթ ցեղին աշխարհը, որուն բնակիչ Արաբացւոց համար աւանդութիւնը կը հռչակէր թէ մարդակեր ու ագլոր ըլլան: Երկու հարիւր հոգի ընկերացան այն արշաւանքին, ու հետեւին 70 զինուոր, 40 հեծնելու կենդանիներ, շոգենաւ մը, երկու մեծ ու շատ մը պզտի նաւակներ Նեղոսի վրայ նաւելու համար: Այս կարաւանին ալ առաջնորդ էին նոյն կանայք, հետեւնին իրենց օգնական ունենալով քանի մը ուսումնական անձինք. բայց այս ճանապարհորդութեան վախճանը եղբրական եղաւ. վասն զի թիննէ տիկինը, իր քոյրը և իրենց ուղեկից ուսումնականներէն մէկը, ու զանազան եւրոպացիք չկարենալով դիմանալ այն վատ առողջ կլիմային, ջերմէ բռնուելով մեռան. միայն Հայկէն պարոնը ու Ալեսանտրինա օրիորդը կըրցան դառնալ այն թշուառ արշաւանքէն:

Սակայն արիասիրտ օրիորդը անով ալ չյուսահատեցաւ. Եգիպտոս քանի մը տարի կեցաւ, որպէս զի կարենայ բոլորովին վարժիլ ջերոտ կլիմաներու, ինչպէս նաև արաբերէն լեզուն սորվելու համար: Ու երբ ինքզինքը ըստ բաւականին պատրաստ գտաւ, ձեռք զարկաւ իր երրորդ, ու դժբաղդաբար յետին ճանապարհորդութեանը. հետն առնելով միայն սև գերիներ՝ երկրին բնակիչներէն, որոնք մտադիւր կը ծառայէին ու կը սիրէին զինքը. վասն զի օրիորդն ալ սիրով ու շատ առատաձեռնութեամբ կը վարուէր հետեւնին. իսկ յեւրոպացւոց միայն երկու հոլանտացի հաւատարիմ ծառաներ հետն առաւ:

Ալեսանտրինայի դիտաւորութիւնն էր ճանապարհորդել 'ի Սուտան, Սևրու աշխարհքները, Պոռնու, և վերջապէս այցելութիւն ընել վատայի անհիւրընկալ երկրին, ուր սպաննուեցան Ֆոկել և Պէօրմանն: Այս վախճանաւ գնաց նախ յԱլճէրի, 'ի Թունուզ ու ետ-



քը 'ի Թրիբունի . ուստի 'ի 1869 յ'18 յունուարի դարձաւ 'ի Մուրսուք, ուր քանի մը ամիս կեցաւ, որպէս զի ետքը կարենայ ճանապօրհորդութեան ելլել մինչև 'ի Գաթ : Մուրսուքէն զատուելէն հինգ օր ետքը, Ալեքսանտրինա կ'ուզէր իր ուղեցոյցներովը՝ զորոնք Թուարէկ տեղացւոյ իշխանը զրկած էր առ նա, ճամբայ ելլել : Բայց այն ուղեցոյցներն կամ աւարառութեան փափաքով, կամ զիրենք զրկող իշխանին դէմ առնելով ինչ որ ունենալով, մտածեցին ըստ պաննել զօրիորդը, ու տէր ըլլալ անոր տմեն հարստութեանը : Յուլիսի առջի օրերն էին, երբ այն անօրէն մարդիկը վրան վազելով, հրացան մը պարպելով սրտին՝ սպաննեցին զինքը . ինչպէս նաև անդթութեամբ զարկին անոր ընկեր ու օգնութեան հասնող Հոլանտացիները . իսկ հետը եղող սևերէն ոմանք գերի եղան անոնց, ուրիշներն ալ խեղճ ու կարօտ վիճակի մը մէջ հազիւ կրցան ետ դառնալ :

Այս դաւաճանները՝ տէրութե՛ ձեռք իյնալով, իրենց չարութեան արժանի պատիժը կրեցին :

ՍՊԱՆԻԱՅԻՔ

ԻՐԵՆՑ ԲԱՐԲԸ ԵՒ ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Քիչ ժողովուրդ կը գտնուի որ Սպանիացւոց պէս նշանաւոր բնաւորութիւն ունենայ : Բայց Սպանիացիք մասնաւորապէս երկու սեփական յատկութիւն ունին, այսինքն է ազգային զգացումն՝ որ կը տիրէ ամեն գաւառաց բնակչաց սրտին մէջ, և անկախութեան ոգին, որով վառուած են հին ժամանակէ 'ի վեր, և երբեք նուազած չէ մէջերնին, և ոչ ալ պիտի նուազի, որչափ ալ կառավարութիւնը օտար տէրութեան լուծին տակն ընկնայ, և երկիրը օտարէ կախումն ունենայ :

Սպանիան թէպէտ երկար դարեր զանազան փոքր անկախ պետութեանց բաժնուած էր, որոնց անուանքը կե-

ցած են մինչև հիմա, և ազգը բոլորովին տարբեր տարբեր բաղադրութենէ ձևացած է, որուն կազմութեանը մասնակցեցան Յոյնք, Հռովմայեցիք, Փիւնիկեցիք, Գոթացիք և ուրիշ բարբարոսք, մանաւանդ վերջապէս արեւելեայ այլաբարոյ ժողովուրդք, և թէպէտ այս խառնուրդէն այլևայլ գաւառաց բնակչաց մէջ առաջ եկաւ արտաքոյ կարգի զանազանութիւն նկատմամբ իրենց մարմնոյն կազմութեանը, խօսիցը, սովորութեանցը և մտաւորական կարողութեանցը, որով ամեն գաւառ իրեն առանձնական շահեր ունեցաւ, երբեմն հակառակ մէկմէկու, և յետ այսչափ և ուրիշ զանազանութեանց անկարելի է գտնել օտարութեան մէջ իրերական թերակողմնայ բնակիչ մը, և հարցունել իրեն թէ ո՞ր տեղացի է, մէկէն չպատասխանէ « Սպանիացի եմ » . թէ և ծննդեամբ կաղալոնացի, վալէնցացի, Կաստիլիացի, Անտալուսիացի և կամ ուրիշ ո՞ր և է տեղացի ըլլայ : Կը հաստատէ պարծանօք և հպարտութե՛ իր Սպանիացի ըլլալը, և չուրանար իր ազգը Գերմանացւոյն պէս, որ կամ Սաքսոնիացի եմ կ'ըսէ, կամ Բրուսիացի, կամ Պաւիէրացի, կամ Աւստրիացի և դժուարաւ Գերմանացի :

Սպանիացւոյն ազգայնութե՛ զգացմանն հետ կը զուգընթանայ նաև անկախութեան հոգին : Եթէ մէկն ընթեռնու Սպանիոյ արինահեղ տարեգրութիւններն, քննէ այս ազգին անտեղիտալի կռիւներն՝ Հռովմայեցւոց ժամանակէն 'ի վեր, անկախութեան երեքդարեան պատերազմներն Սարակինոսաց դէմ, և վերջապէս Գաղղիոյ ահաւոր ըծոյն դէմ մեր օրերուն դիւցազնական կռիւներն . եթէ ամենը լաւ քննէ մէկը՝ չիտարակուսիր հաստատել լուծէ անկախութիւնն է առաջին և սրբազնագոյն պարգև՝ զոր Սպանիացիներ կը ճանչնայ իրեն տրուած : Իրաւ շատ անգամ կը պախարակուի Սպանիացին ազգային գոռոզութեանը համար, և իրօք ալ ոչ ոք Սպանիացի, մանաւանդ ուսեալն ու կրթեալը, կրնայ հպարտա-